

XII

ԱՄՓՈՓՈՒՄ ԵՎ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Եթե մեր երկար ճանապարհի ավարտին մի հայացք ձգենք ետ՝ մեր մեկնակետին, ապա հավանաբար կտարակուսենք, թե արդյոք հասել ենք մեր նպատակին: Մշակույթի փիլիսոփայությունը սկսվում է այն պնդումից, ըստ որի՝ մարդկային մշակույթը անորոշ և մեկուսի փաստերի պարզ համակցում է: Այն ջանում է այդ փաստերը ըմբռնել իբրև համակարգ, իբրև օրգանական ամբողջություն: Էմպիրիկ կամ պատմական տեսանկյունից կարող է թվալ, թե բավական է սոսկ հավաքել մարդկային մշակույթի տվյալները: Այստեղ մեզ հետաքրքրում էր մարդկային կյանքը՝ իր ամբողջությամբ: Մենք խորասուզվել ենք առանձին երևույթների ուսումնասիրության մեջ՝ իրենց ողջ հարստությամբ և բազմազանությամբ, ըմբռնել ենք մարդկային էության բազմերանգությունն ու բազմաձայնությունը: Բայց փիլիսոփայական վերլուծությունը իր առջև այլ խնդիր է դնում: Նրա մեկնակետը և աշխատանքային հիպոթեզը մարմնավորվում են այն համոզման մեջ, ըստ որի՝ զանազան և ըստ երևույթին ցրված ճառագայթները կարելի է ժողովել միասին՝ մեկ ընդհանուր կիզակետում: Փաստերն այստեղ հանդուս են ձևերին, իսկ այդ ձևերը պետք է ունենան ներքին միասնություն: Բայց մենք ունա՞կ ենք արդյոք ապացուցել այս էական կետը: Արդյո՞ք մեր ողջ անհատական վերլուծությունը ճիշտ հակառակը չի նշում: Չէ՞ որ մեզ մշտապես հարկ է եղել ընդգծել տարբեր խորհրդանշային ձևերի՝ մյուսթոսի, լեզվի, արվեստի, կրոնի, պատմության, գիտության յուրահատուկ բնույթն ու կառուցվածքը: Նկատի ունենալով մեր հետազոտության այս կողմը՝ թերևս կարելի էր

Հավանությունն տալ Հակառակ դրույթին՝ մարդկային մշակույթի տարանջատվածության և արմատական տարասեռության դրույթին:

Հիրավի, միայն գոյաբանական կամ մետաֆիզիկական տեսանկյունից անչափ դժվար կլիներ հրաժարվել այս դրույթից: Բայց քննադատական փիլիսոփայության համար այս խնդիրը այլ տեսք է ստանում: Այստեղ մենք պարտավորված չենք ապացուցելու մարդու սուբստանցական միասնությունը: Մարդն այլևս չի համարվում պարզ սուբստանց, որն առկա է իր մեջ և ճանաչվում է իր կողմից: Նրա միասնությունն ըմբռնվում է իբրև Ֆունկցիոնալ միասնություն: Նման միասնությունը չի ենթադրում զանազան տարրերի համասեռություն, որոնցից այն բաղկացած է: Այն ոչ միայն թույլ է տալիս, այլև անգամ պահանջում է իր բաղկացուցիչ մասերի բազմազանություն և բազմաձևություն: Քանզի այն դիալեկտիկական միասնություն է, հակասությունների գոյակցություն:

«Մարդիկ չեն հասկանում, — ասում է Հերակլիտոսը, — թե ինչպես է տարբեր ուղղություններով սփռվածը ինքն իր հետ համաձայնություն գալիս. ներդաշնակություն հակադարձության մեջ, ինչպես աղեղի և քնարի դեպքում»¹: Նման ներդաշնակությունը ի հայտ բերելու համար հարկ չկա ապացուցելու այն տարատեսակ ուժերի նույնությունը կամ նմանությունը, որոնցից այն ստեղծված է: Մարդկային մշակույթի զանազան ձևերը միասնական են ոչ թե իրենց բնույթի նույնությամբ, այլ իրենց հիմնական խնդիրների փոխհամաձայնությամբ: Եթե անգամ մարդկային մշակույթի մեջ գոյություն ունի ինչ-որ կայունություն, ապա այն կարելի է բնութագրել որպես դինամիկ և ոչ ստատիկ հավասարակշռություն. այն արդյունք է հակադիր ուժերի պայքարի: Սույն պայքարը չի բացառում այդ «քողարկված ներդաշնակությունը», որը ըստ Հերակլիտոսի՝ «ավելի լավ է, քան բացահայտը»²:

Մարդու արիստոտելյան բնորոշումն իբրև «հասարակական կենդանու» բավականաչափ սպառիչ է: Այն մեզ տալիս է սեռային ըմբռնում, բայց ոչ՝ յուրահատուկ տարբերա-

կում: Սոցիալականությունն ինքնին ոչ մարդու բացառիկ բնորոշումն է և ոչ էլ որևէ անհատ մարդու արտոնությունը: Այսպես կոչված կենդանական հանրություններում՝ մեղունների, մրջյունների մեջ, մենք հայտնաբեռում ենք աշխատանքի հստակ բաժանում և զարմանալիորեն բարդ սոցիալական կազմակերպություն: Բայց մարդու պարագայում մենք գտնում ենք ոչ միայն գործողության հանրություն, ինչպիսին առկա է կենդանիների մոտ, այլ նաև մտքի և զգացմունքի հանրություն: Լեզուն, մյուլթոսը, արվեստը, կրոնը, գիտությունը հասարակութայն այս առավել բարձրակարգ ձևի տարրերն ու բնորոշ պայմաններն են: Դրանք այն միջոցներն են, որոնցով սոցիալական կյանքի ձևերը, որ մենք հայտնաբերում ենք օրգանական բնության մեջ, զարգանալով հասնում են նոր՝ հասարակական գիտակցութայն աստիճանի: Մարդու հասարակական գիտակցությունը ունի երկակի պայմանավորվածություն՝ նմանակման և տարբերակման գործողություններով: Մարդը կարող է ճանաչել ինքն իրեն, գիտակցել իր անհատականությունը միմիայն հասարակական կյանքի միջոցով: Բայց նրա համար այդ միջոցը նշանակում է ավելին, քան ինչ-որ արտաքին որոշիչ ուժ: Մարդը, ինչպես կենդանիները, ենթարկվում է հանրության կանոններին, բայց, ի հավելումն, ակտիվ դեր ունի հասարակության կյանքի ձևավորման գործում, ինչպես նաև ակտիվ ուժ այդ կյանքի ձևերը փոխելու համար: Մարդկային հասարակութայն սկզբնական փուլերում նման ակտիվությունը գրեթե աննշան էր. այն ի հայտ էր գալիս նվազագույն չափով: Բայց հետագայում այս հատկանիշը ավելի պարզորոշ ու նշանակալից է դառնում: Այս դանդաղ զարգացմանը կարելի է հետևել մարդկային մշակույթի գրեթե բոլոր ձևերում:

Հանրահայտ փաստ է, որ կենդանիների հանրություններում կատարվող բազմաթիվ արարքներ ոչ միայն հավասար են, այլև որոշ առումներով գերազանցում են մարդկանց գործողությունների արդյունքները: Հաճախ նշվում է, որ մեղունները իրենց բջիջները կառուցելիս նմանվում են հմտավարժ երկրաչափի՝ դրսևորելով բարձր ճշգրտություն

ու ջանադրուեթյուն: Նման գործունեությունը պահանջում է համախմբման ու համագործակցության անչափ բարդ համակարգ: Բայց կենդանական այս բոլոր գործողություններում մենք անհատական տարբերակում չենք գտնում: Դրանք բոլորն էլ ստեղծված են միևնույն միջոցով և միևնույն անփոփոխ կանոնների համաձայն: Անհատական ընտրության կամ ունակությունների համար ոչ մի հնարավորություն չի մնում: Կենդանական կյանքի միայն առավել բարձր փուլերում ենք հանդիպում մասնակի անհատականացման առաջին նշաններին: Մարդանման կապիկների Վոլֆգանգ Քյոլբերի դիտարկումները ըստ էության ապացուցել են, որ այս կենդանիների բանականության և հմտության միջև գոյություն ունեն բազում տարբերություններ: Նրանցից մեկը կարող է լուծել այնպիսի խնդիր, որը մեկ ուրիշի համար մնում է անլուծելի: Եվ այստեղ անգամ կարելի է խոսել անհատական «գյուտերի» մասին: Այս ամենը, սակայն, լիովին անհարիր է կենդանիների կյանքի ընդհանուր կառուցվածքին: Այդ կառուցվածքը որոշվում է ընդհանուր կենսաբանական օրենքով, որի համաձայն՝ ձեռքբերովի հատկանիշները ժառանգաբար փոխանցվել չեն կարող: Ամեն կատարելություն, որ օրգանիզմը կարող է ձեռք բերել իր անհատական կյանքի ընթացքում, սահմանափակված է իր սեփական գոյությունը և չի ներգործում ցեղի կյանքի վրա: Անգամ մարդը բացառություն չէ կենսաբանական այս ընդհանրական կանոնից: Սակայն մարդը նոր միջոց է հայտնագործել իր ստեղծագործությունների պահպանման ու տարածման համար: Նա անկարող է ապրել իր կյանքը՝ առանց արտահայտելու այն: Այս արտահայտության տարբեր միջոցները նոր ոլորտ են կազմում: Դրանք ունեն իրենց սեփական կյանքը, մի տեսակ հավերժություն, որի շնորհիվ նրանք վերապրում են մարդու անհատական և վաղանցիկ գոյությունը: Մարդկային գործունեության բոլոր տեսակների մեջ առկա է հիմնարար բևեռացում, որը կարող է նկարագրվել տարբեր կերպ: Կարելի է խոսել լարվածության մասին, որ առաջանում է կայունության և զարգացման միջև, կամ կյանքի ամուր և կայուն ձևերի հանգեցնող

միտումի և մեկ այլ միտումի միջև, որ խախտում է այս հաստատուն սխեման: Մարդը երկփեղկվում է այս երկու միտումների միջև, որոնցից մեկը ջանում է պահպանել հին ձևերը, մինչդեռ մյուսը աշխատում է ստեղծել նորերը: Անընդմեջ պայքար է գնում ավանդույթի և նորարարության, վերարտադրող և ստեղծարար ուժերի միջև: Այս երկվույթյունը առկա է մշակութային բոլոր ոլորտներում: Փոփոխվում է միմիայն հակադիր գործոնների համամասնությունը: Գերակշռող են թվում մերթ մեկ, մերթ մյուս գործոնը: Այս գերակշռությունն է առավելապես որոշում առանձին ձևերի բնույթը և յուրահատուկ տեսք հաղորդում նրանցից յուրաքանչյուրին:

Մյուլթոսի և նախնադարյան կրոնի մեջ կայունացման միտումը այնքան ուժեղ է, որ լիովին հաղթահարում է հակադիր բևեռը: Այս երկու մշակութային երևույթները մարդկային կյանքի թերևս առավել պահպանողական ուժերն են: Դիցաբանական մտածողությունը թե իր ծագմամբ և թե սկզբունքներով ավանդապահ է: Քանզի մյուլթոսը մարդկային կյանքի արդիական ձևերը անկարող է հասկանալ, բացատրել ու մեկնաբանել այլ կերպ, քան հանգեցնելով դրանք հեռավոր անցյալին: Այն, ինչի արմատները այդ դիցաբանական անցյալում են, ինչը նախկինում երբեք եղել է, ինչը գոյություն ունի անհիշելի ժամանակներից, հաստատուն ու անվիճելի է: Սրբապղծություն կլինի վիճարկել այն: Քանզի նախնադարյան մտածողության համար չկա առավել սուրբ բան, քան կյանքի շարունակականության նվիրական լինելը: Հարատևություն է բոլոր իրերին, ֆիզիկական օբյեկտներին ու մարդկային հաստատություններին հաղորդում իրենց արժեքը, արժանապատվությունը, բարոյական ու կրոնական հարգը: Այս արժանապատվությունը պահպանելու համար անհրաժեշտ է շարունակել և պահպանել մարդկային կարգը նույն՝ անփոփոխ տեսքով: Շարունակականության ցանկացած խախտում կաղճատի դիցաբանական կամ կրոնական կյանքի բուն սուբստանցը: Նախնադարյան մտածողության տեսանկյունից կործանարար է անգամ ամենաաննշան շեղումը իրերի հաստատված սխե-

մայից: Մոգական բանաձևերի բառերը, հմայանքներն ու դյուլթանքները, կրոնական ծիսակատարություն, զոհաբերություն կամ աղոթքի առանձին հատվածներ հարկ էր կրկնել միևնույն անփոփոխ կարգով: Յուրաքանչյուր փոփոխություն ի չիք կդարձնե մոգական բառի կամ կրոնական արարողության ուժն ու ազդեցությունը: Նախնադարյան կրոնը, այսպիսով, բնավ տեղ չի թողնում անհատական մտածողության ազատության համար: Նրա հաստատուն, խիստ ու անխախտ վարքականոնները սահմանված են ոչ միայն յուրաքանչյուր մարդկային գործողության, այլ նաև մարդկային յուրաքանչյուր զգացողության համար: Մարդու կյանքը մշտական ճնշման ներքո է: Այն պարփակված է դրական ու բացասական պահանջմունքների, նվիրաբերումների ու արգելանքների, ծիսակատարությունների ու տաբուների նեղ շրջանակով: Այնուամենայնիվ, կրոնի պատմությունը ցույց է տալիս, որ կրոնական մտքի այս առաջին ձևը բնավ չի արտահայտում իր իրական նշանակությունն ու նպատակը: Այստեղ մենք նաև ի հայտ ենք բերում շարունակական շարժում հակառակ ուղղությամբ: Արգելքը, որ դրվել էր մարդկային կյանքի վրա նախնադարյան դիցաբանական ու կրոնական մտքի կողմից, աստիճանաբար թուլանում էր կամ առնվազն, թվում էր՝ կորցնում է իր պարտադրող ուժը: Առաջանում է կրոնի նոր՝ դինամիկ ձև, որը նոր հեռանկար է բացում բարոյական ու կրոնական կյանքի համար: Նման դինամիկ կրոնում անհատական ուժերը առավելություն են ձեռք բերել կայունացման ուժերի նկատմամբ: Կրոնական կյանքը հասել է իր հասունացմանն ու ազատությանը. այն վերացրել է խիստ ավանդապաշտության կախարդանքը³:

Եթե դիցաբանական ու կրոնական մտքից անցում կատարենք լեզվին, ապա այստեղ ի հայտ կբերենք նույն հիմնական պրոցեսը մեկ այլ տեսքով: Չէ՞ որ լեզուն մարդկային մշակույթի առավել պահպանողական ուժերից է: Առանց այդ պահպանողականության այն անկարող է իրականացնել իր հիմնական խնդիրը՝ հաղորդակցությունը: Հաղորդակցությունը խիստ կանոններ է պահանջում: Լեզ-

վաբանական սիմվոլներն ու ձևերը պետք է օժտված լինեն կայունությամբ ու անփոփոխությամբ, որպեսզի ընդդիմանան ժամանակի քայքայող ու կործանարար զոդեցությանը: Այսուհանդերձ, լեզվի զարգացման մեջ հնչյունական ու իմաստային փոփոխությունները սոսկ պատահական բնույթ չունեն: Դրանք այս զարգացման անքակտելի ու անհրաժեշտ պայմաններն են: Այս շարունակական փոփոխության գլխավոր պատճառներից մեկն այն է, որ լեզուն պետք է փոխանցվի սերնդեսերունդ: Այս փոխանցումը հնարավոր է միայն անփոփոխ ու կայուն ձևերի վերարտադրություն միջոցով: Լեզվի յուրացման պրոցեսը մշտապես ներառում է ակտիվ ու արդյունավետ վերաբերմունք: Այս առումով անգամ երեխայի սխալները անչափ բնորոշ են: Ամենևին չլինելով սոսկ թերություններ, որ առաջանում են հիշողության կամ վերարտադրության անբավարար ունակությունից, նրանք երեխայի կողմից դրսևորված ակտիվության և ինքնուրույնության լավագույն ապացույցն են: Իր զարգացման համեմատաբար վաղ փուլում երեխան ձեռք է բերում իր մայրենի լեզվի ընդհանուր կառուցվածքի որոշակի զգացողություն՝ չտիրապետելով, անշուշտ, լեզվաբանական կանոնների վերացական իմացությամբ: Նա օգտագործում է բառեր կամ նախադասություններ, որոնք երբեք չի լսել և որոնք շեղվում են ձևաբանական կամ շարահյուսական կանոններից: Բայց հենց այս փորձերում ի հայտ է գալիս երեխայի՝ նմանությունների նկատմամբ սուր զգացողությունը: Սրանով նա ապացուցում է իր ունակությունը ընկալելու լեզվի ձևը՝ սոսկ նրա մատերիան վերարտադրելու փոխարեն: Լեզվի սերնդեսերունդ փոխանցումը, հետևաբար, չի կարելի համեմատել սեփականության պարզ փոխանցման հետ, որի ընթացքում նյութական իրը, առանց փոխելու իր բնույթը, փոխում է միայն իր սեփականատիրոջը: Հերման Պաուլը հատուկ ընդգծում է այս կետը իր «Prinzipien der Sprachgeschichte» երկում: Նա կոնկրետ օրինակներով ցույց է տալիս, որ լեզվի պատմական զարգացումը մեծապես պայմանավորված է այն դանդաղ ու շարունակական փոփոխություններով, որ տեղի են ունենում բառերի ու լեզվաբանա-

կան ձևերի՝ ծնողներից զավակներին փոխանցման ժամանակ: Ըստ Պաուլի՝ այս պրոցեսը հարկ է դիտարկել իբրև հնչյունական տեղաշարժերի ու իմաստային փոփոխությունների գլխավոր պատճառներից մեկը⁴: Այս ամենում անչափ պարզորոշ զգացվում է երկու տարբեր միտումների առկայությունը. մեկը տանում է լեզվի պահպանման, մյուսը՝ նորացման, երիտասարդացման: Սակայն սա դեռևս չի խոսում այս երկու միտումների հակասություն մասին: Նրանք կատարելապես հավասարակշռված են. նրանք լեզվի կյանքի երկու անհրաժեշտ տարրերն ու պայմաններն են:

Այդ նույն խնդրի մի նոր տեսանկյունն ենք տեսնում արվեստի զարգացման մեջ: Այստեղ, սակայն, երկրորդ՝ ինքնատիպություն, անհատականություն, ստեղծագործական ունակություն գործոնը, թվում է, որոշակիորեն գերազանցում է առաջինին: Արվեստում մենք ավանդական ձևերը կրկնելով կամ վերարտադրելով չենք բավարարվում: Մենք նոր պահանջներ ենք զգում, ներմուծում ենք գնահատման նոր չափանիշներ: «*Mediocribus esse poetis non di, non homines, non concessere columnae*»*,— ասում է Հորատիոսը իր «*Ars Poetica*» երկում: Անշուշտ, անգամ այստեղ ավանդույթը դեռևս առաջնակարգ դեր է կատարում: Ինչպես լեզվի դեպքում, նույն ձևերը փոխանցվել են սերնդեսերունդ: Բազմիցս ի հայտ են գալիս արվեստի նույն հիմնական շարժառիթները: Այսուհանդերձ, յուրաքանչյուր խոշոր արվեստագետ որոշ իմաստով նոր դարաշրջան է ստեղծում: Մենք գիտակցում ենք այս փաստը, երբ մեր խոսքի առօրյա ձևերը համեմատում ենք բանաստեղծական լեզվի հետ: Ոչ մի բանաստեղծ չի կարող կատարելապես նոր լեզու ստեղծել: Նա պետք է ընտրի բառերը և հետևի իր լեզվի հիմնական կանոններին: Այս ամենին, սակայն, բանաստեղծը հաղորդում է ոչ միայն մի նոր կիրառություն, այլ նաև նոր կյանք: Պոեզիայում բառերը միայն վերացական իմաստով նշանակիչ չեն. նրանք սոսկ ցուցիչ չեն, որոնցով մենք

* «Միջակ բանաստեղծին չեն ընդունում ո՛չ աստվածները, ո՛չ մարդիկ և ո՛չ էլ գրավաճառի կրպակները» (լատ.):

ցանկանում ենք նշել որոշակի էմպիրիկ օբյեկտներ: Այստեղ մեր բոլոր սովորական բառերը մի տեսակ կերպարանափոխության են ենթարկվում: Շեքսպիրի յուրաքանչյուր բանաստեղծություն, Դանտեի կամ Արիոստոյի յուրաքանչյուր քառյակ, Գյոթեի յուրաքանչյուր լիրիկական պոեմ ունի իր յուրահատուկ հնչողությունը: Լեսսինգը ասում էր, որ նույնքան անհնար է գողանալ Շեքսպիրի բանաստեղծությունը, որքան՝ շերկուլեսի մահակը: Բայց առավել ապշեցուցիչ է այն, որ մեծ պոետը երբեք ինքն իրեն չի կրկնում: Շեքսպիրը խոսում էր մի լեզվով, որ նախքան այդ երբեք չէր լսվել, և շեքսպիրյան յուրանքանչյուր կերպար խոսում էր իր սեփական անզուգական ու անաղարտ լեզվով: Լիրից ու Մակբեթից, Բրուտոսից ու Համլետից, Ռոզալինդայից ու Բեստրիչից մենք լսում ենք այս մասնավոր լեզուն, որն անհատի հոգու հայելին է: Միմիայն այս եղանակով պոեզիան կարող է արտահայտել այն բոլոր անհամար նրբությունները, զգացողություն այն նրբերանգները, որ հնարավոր չէ ներկայացնել որևէ այլ արտահայտչամիջոցի օգնությամբ: Եթե լեզուն իր զարգացման ընթացքում կարիք ունի մշտական նորացման, ապա դրա համար գոյությունն չունի ավելի հստակ ու ավելի խորունկ աղբյուր, քան պոեզիան: Բարձր պոեզիան մշտապես հստակ դրոշմ, որոշակի հետք է թողնում լեզվի պատմության մեջ: Իտալերենը, անգլերենը, գերմաներենը այնպիսին չէին Դանտեի, Շեքսպիրի, Գյոթեի մահական ժամանակ, ինչպիսին եղել էին նրանց ծննդյան օրը:

Մեր էսթետիկական տեսություններում արվեստի ստեղծագործությունը պայմանավորող պահպանողական և արտադրական ուժերի միջև եղած տարբերությունը մշտապես զգացվել և արտահայտվել է: Նմանակություն ու ոգեշնչման տեսությունների միջև բոլոր ժամանակներում առկա է եղել լարվածություն և հակամարտություն: Առաջինը հայտարարում է, որ արվեստի ստեղծագործություն մասին հարկ է դատել ըստ ամրակայված ու անփոփոխ կանոնների կամ ըստ դասական նմուշօրինակների: Երկրորդը մերժում է գեղեցկության բոլոր չափանիշներն ու օրենքները: Գեղեցկությունը բացառիկ է և անհամեմատելի, այն հանճարի

ստեղծագործությունն է: Կլասիցիստական ու նեոկլասիցիստական տեսությունների դեմ տեական պայքարից հետո, XVIII դարում գերակշռող դարձավ հենց այս հայեցակարգը և ուղի հարթեց մեր ժամանակակից էսթետիկայի համար: «Հանճարը, — գրել է Կանտը իր «Դատողունակություն քննադատության» մեջ, — հոգեկան բնածին (ingenium) կարգն է, որի միջոցով բնությունը կանոններ է տալիս արվեստին»: Այն «տաղանդ է՝ ստեղծելու այն, ինչի համար ոչ մի որոշակի կանոն տալ հնարավոր չէ. այն սոսկ որևէ կանոնի միջոցով յուրացնելու ունակությունն չէ: Հետևաբար, ինքնատիպությունը պետք է լինի նրա առաջին հատկանիշը»: Ինքնատիպության այս ձևը արվեստի առանձնաշնոհն ու տարբերակիչ հատկանիշն է. այն չի կարող տարածվել մարդկային գործունեության այլ ոլորտների վրա: «Բնությունը հանճարի միջոցով կանոններ է վերագրում ոչ թե գիտությանը, այլ արվեստին, ընդ որում՝ սոսկ այն դեպքում, եթե այն իրոք գեղեցիկ արվեստ է»: Կարելի է խոսել Նյուտոնի մասին որպես գիտական հանճարի, և սակայն՝ միմիայն փոխաբերաբար: «Այսպիսով, մենք կարող ենք յուրացնել այն ամենը, ինչ Նյուտոնը շարադրել է իր անմահ աշխատության մեջ՝ բնափիլիսոփայության հիմունքների վերաբերյալ, թեև մեծ միտք էր պահանջվում այն հայտնագործելու համար. սակայն մենք անկարող ենք սովորել ոգեղեն պոեզիա հորինել, որքան էլ որ արտահայտիչ լինեն արվեստի պատվիրանները և հիասքանչ՝ նրա նմուշները:»⁵

Հիրավի, սուբյեկտիվության և օբյեկտիվության, անհատականության և ընդհանրականության միջև փոխհարաբերությունը նույնական չէ արվեստի ստեղծագործության մեջ և գիտական երկում: Ծշմարիտ է, գիտական մե հայտնագործությունը կրում է նաև իր հեղինակի հոգևոր յուրահատկության կնիքը: Նրանում ի հայտ են գալիս ոչ միայն իրերի նոր օբյեկտիվ կողմերը, այլև մտքի անհատական կերտվածքը և անգամ անձնական ոճը: Բայց այս ամենը ունի սոսկ հոգեբանական, ոչ թե համակարգային արժեք: Գիտության օբյեկտիվ բովանդակության մեջ այս անհատական հատկանիշները մոռացվում են և անհետանում, քանզի

գիտական մտքի հիմնական նպատակներից մեկը բոլոր անձնական ու մարդաբանական տարրերի վերացումն է: Բեկոնի խոսքերով՝ գիտությունը ձգտում է հասկանալ աշխարհը «ex analogia universi»*, ոչ թե «ex analogia hominis»**6:

Մարդկային մշակույթը իբրև ամբողջություն կարելի է նկարագրել իբրև մարդու հետևողական ինքնաազատագրում: Լեզուն, արվեստը, կրոնը, գիտությունը այս պրոցեսի տարբեր փուլերն են: Սրանցից յուրաքանչյուրում մարդը հայտնաբերում և փորձարկում է մի նոր ուժ, ուժ, որ կոչված է կառուցելու իր սեփական՝ «իդեալական» աշխարհը: Փիլիսոփայությունը անկարող է հրաժարվել այս իդեալական աշխարհում հիմնարար միասնության որոնումներից: Բայց պետք է այս միասնությունը շփոթել պարզության հետ: Չի կարելի անտեսել մարդու զանազան ունակությունների միջև եղած լարվածությունն ու հակասությունները, կտրուկ հակասություններն ու խոր հակամարտությունները: Սրանք ընդհանուր հայտարարի հանգեցնել հնարավոր է: Դրանք միտված են դեպի տարբեր ուղղություններ և ենթարկվում են տարբեր սկզբունքների: Բայց այս բազմաքանակությունը և անհամատեղելիությունը անհամաձայնությունն ու աններդաշնակությունն չեն նշանակում: Այս բոլոր ֆունկցիաները ամբողջացնում ու լրացնում են միմյանց: Յուրաքանչյուրը նոր հեռանկար է բացում և մեզ ներկայացնում է մարդկության նոր դիմագիծը: Աններդաշնակությունը ներդաշնակության մեջ է ինքն իր հետ. հակադրությունները փոխադարձաբար բացառող չեն, այլ միմյանցով պայմանավորված. «ներդաշնակություն՝ հակադարձության մեջ, ինչպես աղեղի ու քնարի դեպքում»:

* «Ունիվերսումի համաբանություն» (լատ.):

** «Մարդու համաբանություն» (լատ.):